ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ

Ամսաթիվ՝ 28 նոյեմբերի 2025 թ.
Վայր՝ Թալինի համայնքապետարան

Նիստին մասնակցում էին

Մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի անդամները, ինչպես նաև գործընթացի մշտադիտարկողները:

Օրակարգ

- Թալին համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի աշխատանքների քննարկում
- Իրականացվելիք գործողությունների և ժամանակացույցի հաստատում

Լսեցին

Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացվեց 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի մեկնարկի անհրաժեշտությունը և նախապատրաստական փուլի շրջանակներում իրականացվելիք հիմնական գործողությունները, մասնավորապես՝
• Թալին համայնքի ավագանու համապատասխան որոշման ընդունումը,
• Համայնքի ղեկավարի որոշման ընդունումը,
• Մասնակցային բյուջետավորման գործընթացի գործողությունների ժամանակացույցի կազմումն ու հաստատումը:

Քննարկվեց

Հանձնաժողովի անդամների և մշտադիտարկողների մասնակցությամբ քննարկվեցին ներկայացված գործողությունների հերթականությունը, պատասխանատու անձանց շրջանակը և իրականացման ժամկետները՝ շեշտադրելով գործընթացի թափանցիկության, վերահսկելիության և ժամանակին իրականացման կարևորությունը:

Արձանագրվել են հետևյալ կետերը.

- 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի շրջանակներում իրականացված գործողությունները:
- Նախապատրաստական փուլի իրականացման համար սահմանվել են հետևյալ ժամկետները՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ից մինչև նոյեմբերի 28-ը:
- Նախապատրաստական փուլի իրականացման պատասխանատու նշանակվել են՝
  - Մնացական Ներսիսյանը
  - Ռազմիկ Ղազարյանը
- Նախապատրաստական փուլի աշխատանքների կազմակերպմանն աջակցող նշանակվել է՝ Անժելա Դիլանյանը:
- Նախապատրաստական փուլի աշխատանքներին մասնակցել են նաև մասնակցային բյուջետավորման գործընթացի մշտադիտարկողները՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունն ու պատշաճ վերահսկողությունը:

Նախապատրաստական փուլի ավարտ

Սույն արձանագրությունը կազմվեց և հաստատվեց հանձնաժողովի անդամների և մշտադիտարկողների մասնակցությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝
Արթուր Հարությունյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝
Մնացական Ներսիսյան

Անդամներ՝
Նելլի Մարգարյան
Վերժինե Մկրտչյան
Նունե Սարգսյան
Լուսինե Ավագյան
Աղավնի Հովհաննիսյան
Նարեկ Աբրահամյան
Շուշանիկ Շատոյան
Նորայր Հարոյան
Անահիտ Աբգարյան